ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

**Հավելված N 1**
**Հայաստանի Հանրապետության**
**պետական եկամուտների կոմիտեի**
**նախագահի 2020 թվականի**
**մայիսի 27-ի N 477-Ն հրամանի**

**Օրինակելի ձև**

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
Գործադիր մարմնի կողմից
11.04.2023 թ.

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
***«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՁՅՈՒԴՈՅԻ ՖԵԴԵՐԱՑԻԱ»***
հասարակական կազմակերպության 2022 թ. գործունեության մասին

| | |
|---|---|
| **1. Հասարակական կազմակերպության՝** | |
| 1.1 Լրիվ անվանումը | «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՁՅՈՒԴՈՅԻ ՖԵԴԵՐԱՑԻԱ» |
| 1.2 ՀՎՀՀ-ն | 02549194 |
| 1.3 Գտնվելու վայրը | ԵՐԵՎԱՆ ԴԱՎԹԱՇԵՆ Ա. Իոսիֆյան փող. 17 |
| 1.4 Պետական գրանցման համարը | 211.171.03599 |
| 1.5 Պետական գրանցման տարին, ամիսը, ամսաթիվը | 2005-10-14 |
| 1.6 Հեռախոսը (այդ թվում՝ բջջային) | +(374)096550885 |
| 1.7 Պաշտոնական ինտերնետային կայքը | |
| 1.8 Էլեկտրոնային փոստը | armjudo@yandex.ru |

| | | |
|---|---|---|
| 2 Գործադիր մարմնի ղեկավարի՝ | | |
| Անունը | Ազգանունը | Պաշտոնը |
| Վարդան Ոսկանյան | Ոսկանյան | Նախագահ |

| |
|---|
| 3 Կանոնադրությամբ սահմանված գործունեության առարկան և նպատակը |
| Բարձր որակավորում ունեցող մարզիչների և մարզիկների պատրաստման համակարգի կատարելագործումը օլիմպիական խաղերում ,Եվրոպայի ,աշխարհի ու միջազգային այլ մրցաշարերում Հայաստանի հավաքական թիմերի հաջող մասնակցության ապահովմանը աջակցել |
| Օտարերկրյա Ձյուդոյի ազգային ֆեդերացիաների ,ինչպես նաև սփյուռքի ու այլ կազմակերպությունների հետ մարզական ու գործարարական կապերի ընդլայնում ու ամրապնդում |
| Ֆեդերացիայի մարզիկների ,մարզիչների ու մանագետների իրավունքների ապահովում մարզաձևի վետերանների ու հաշմանդամների նկատամամբ խնամքի կազմակերպում ,ֆինանսական ու նյութական օգնություն; |
| Ազգաբնակչության շրջանում անվճար Ձյուդո մարզաձևի պրոպագանդման և մասսայականացման աշխատանքների կազմակերպում |
| Ազգաբնակչության շրջանում ֆիզկուլտուրային -առողջարարական ծառայությունների կազմակերպում |
| ֆեդերացիան իր կանոնադրական նպատակներինը և խնդիրները արդյունավետ իրականացնելու համար կարող է կազմակերպել մարզական միջոցառումներ ,առաջնություններ ,մրցաշարեր,մրցումներ,,փառատոններ,գործնական սեմինարներ,դասընթացներ, հանդիպումներ նայլ միջոցառումներ և իր իրավասությունւան սահմաններում կատարել այլ աշխատանքներ |
| Ֆեդերացիան համագործացում է ինչպես ՀՀ պետական և ոչ պետակն պետական մարմինների, միջազգային ևտեղական մարզական ևհասարակական կազմակերպությունների, այնպես էլ անհատ անձանց հետ:Ֆեդերացիան կարող է իր կանոնադրական նպատակներից և խնդիրներից բխող առաջարկներ ներկայացնել ՀՀ պետական մարմիններին: |
| Իր կանոնադրական նպատակների և խնդիրների իրականացման աշխատանքի կազմակերպման նպատակով , ֆեդերացիան օրենքով սահմանված կարգով իրավունք ունի իրականացնել ձեռնարկատիրականգործնեություն: |
| Իրականացնում է սյուն կանոնադրությունից բշող և ՀՀօրենսդրությամբ չարգելված այլ գործնեություն: |
| Ֆեդերացին օրենքով սահմանված կարգով կարող է կազմակերպել և ֆինասավորել մարզական ակումբբերին ,սեկցիաններին և մարզադպրոցներին: |

| | |
|---|---|
| **4 Հասարակական կազմակերպության՝** | |
| 4.1 Անդամների թիվը | 850 |
| 4.2 Կամավորների թիվը | 1 |
| 5 Հաշվետու տարվա ընթացքում գումարված ժողովների քանակը | 1 |

**6. Իրականացված ծրագրեր՝**

| Հ/Հ | 6.1 Ծրագրի անվանումը | 6.2 Վայրը | 6.3 Նպատակը | 6.4 Կարգավիճակը |
|---|---|---|---|---|
| 1 | ՈՒՄՀ մեծ և երիտասար | Ծաղկաձոր | նախապատրաստվել միջազգային մրցաշարի | Ավարտված |
| 2 | ՈՒՄՀ պատանիներ | Ծաղկաձոր | նախապատրաստվել միջազգային մրցաշարի | Ավարտված |

Digitally signed by
GRIGORYAN
GARNIK
2905860359
Date: 2023.07.14
15:38:34 AMT

| | | | | |
|---|---|---|---|---|
| 3 | Եվրոպայի Ձյուդոյի միության 2022թ տարեկան անդամավճար | Վիենա,Ավստրիա | Մասնակության վճար բոլոր մրաշարերին | Ավարտված |
| 4 | ՈՒՄՀ մեծեր | Գորի,Վրաստան | նախապատրաստվել միջազգային մրցաշարի | Ավարտված |
| 5 | ՈՒՄՀ երիտասարդներ | Գորի ,Վրաստան | նախապատրաստվել միջազգային մրցաշարի | Ավարտված |
| 6 | Եվրոպայի գավաթ և ՈՒՄՀ երիտասարդներ | Աթենք ,Հունաստան | մրցանակային տեղեր գրավել | Ավարտված |
| 7 | Միջազգային մրցաշար և ՈՒՄՀ մեծեր | Տատա, Հունգարիա | նախապատրաստվել միջազգային մրցաշարի | Ավարտված |
| 8 | ՈՒՄՀ պատանիներ | Երևան, ՀՀ | նախապատրաստվել միջազգային մրցաշարի | Ավարտված |
| 9 | ՈՒՄՀ պատանիներ | Գյումրի ,ՀՀ | նախապատրաստվել միջազգային մրցաշարի | Ավարտված |
| 10 | Եվրոպայի գավաթ մեծեր | Սարաևո, Բոսնիա Հերցեգովինա | մրցանակային տեղեր գրավել | Ավարտված |
| 11 | Եվրոպայի գավաթ և ՈՒՄՀ պատանիներ | Բուխարեստ, Ռումինիա | մրցանակային տեղեր գրավե | Ավարտված |
| 12 | Եվրոպայի առաջնություն մեծեր | Սոֆիա, Բուլղարիա | մրցանակային տեղեր գրավե | Ավարտված |
| 13 | ՈՒՄՀ մեծեր և երիտասարդներ | Գորի ,Վրաստան | նախապատրաստվել միջազգային մրցաշարի | Ավարտված |
| 14 | Եվրոպայի առաջնություն պատանիներ | Պորեչ,Խորվաթիա | մրցանակային տեղեր գրավե | Ավարտված |
| 15 | ՈՒՄՀ պատանիներ | Գորի, Վրաստան | նախապատրաստվել միջազգային մրցաշարի | Ավարտված |
| 16 | ՈՒՄՀ մեծեր | Վլադիկավկազ ՌԴ | նախապատրաստվել միջազգային մրցաշարի | Ավարտված |
| 17 | ՀՀառաջնություն երիտասարդներ | Երևան ,ՀՀ | ՀՀ հավաքական թիմի կազմավորում | Ավարտված |
| 18 | ՀՀ առաջնություն պատանիներ | Երևան ,ՀՀ | ՀՀ հավաքական թիմի կազմավորում | Ավարտված |
| 19 | ՈՒՄՀ մեծեր | Երևան ,ՀՀ | նախապատրաստվել միջազգային մրցաշարի | Ավարտված |
| 20 | ՈՒՄՀ երիտասարդներ | Երևան ,ՀՀ | նախապատրաստվել միջազգային մրցաշարի | Ավարտված |
| 21 | ՈՒՄՀ երիտասարդներ նպատանիներ | Գորի, Վրաստան | նախապատրաստվել միջազգային մրցաշարի | Ավարտված |
| 22 | Գնումների համակարգողի ծառայություն | Երևան ,ՀՀ | Գնումների կազմակերպում | Ավարտված |
| 23 | Գնումների համակարգողի ծառայություն | Երևան ,ՀՀ | Գնումների կազմակերպում | Ավարտված |
| 24 | Եվրոպայի առաջնություն մինչև 23 տարեկաններ | Սարաևո, Բոսնիա Հերցեգովինա | Մրցանակային տեղեր գրավում | Ավարտված |
| 25 | ՈՒՄՀ մեծեր և երիտասարդներ | Գորի, Վրաստան | նախապատրաստվել միջազգային մրցաշարի | Ավարտված |
| 26 | Գնումների համակարգողի ծառայություն | Երևան ,ՀՀ | Գնումների կազմակերպում | Ավարտված |
| 27 | Եվրոպայի առաջնություն երիտասարդներ | Պրահա, Չեխիա | մրանակային տեղեր գրավել | Ավարտված |
| 28 | ՈՒՄՀ երիտասարդներ | Գյումրի ՀՀ | նախապատրաստվել միջազգային մրցաշարի | Ավարտված |
| 29 | ՈՒՄՀ պատանիներ | Գյումրի ՀՀ | նախապատրաստվել միջազգային մրցաշարի | Ավարտված |
| 30 | Աշխարհի առաջնություն պատանիներ | Սարաևո, Բոսնիա Հերցեգովինա | մրցանակային տեղեր գրավել | Ավարտված |
| 31 | ՈՒՄՀ պատանիներ | Գորի, Վրաստան | նախապատրաստվել միջազգային մրցաշարի | Ավարտված |
| 32 | Միջազգային մրցաշար պատանիներ | Նալչիկ, ՌԴ | Մրցանակային տեղեր գրավելը | Ավարտված |
| 33 | ՈՒՄՀ երիտասարդներ | Տուափսե ,ՌԴ | նախապատրաստվել միջազգային մրցաշարի | Ավարտված |
| 34 | ՀՀառաջնություն մեծեր | Երևան ,ՀՀ | հավաքական թիմի կազմավորում | Ավարտված |
| 35 | ՀՀ հավաքական թիմերի մարզիկների ֆունիոնալ վիճակի արդյունավետության բարձրացման նպատակով վիտամինիզացիայի և չարգելված սպորտային հավելյալ սնունդով ապահովումր | Երևան ,ՀՀ | Սննդային հավելում տարվա ընթացքում | Ավարտված |
| 36 | Մարզիչների միջոառում | Երևան ՀՀ | մարզիցների միջոցառում | Ավարտված |
| 37 | մարզիկների մարզական միջոցառումներ | Երևան ՀՀ | մարզիկնեչի մարզական միջացուոուներ | Ավարտված |

**7. Հանրային միջոցներով իրականացված ծրագրեր՝**

| Հ/Հ | 7.1 Ծրագրի անվանումը | 7.2 Վայրը | 7.3 Կարգավիճակը | 7.4 Նպատակը | 7.5 Հիմնական արդյունքները |
|---|---|---|---|---|---|
| 1 | ՈՒՄՀ մեծ և երիտասար | Ծաղկաձոր | Ավարտված | նախապատրաստվել միջազգային մրցաշարի | մարզական նախապատրաստվածությ ուն |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 2 | ՈՒՄՀ պատանիներ | Ծաղկաձոր | Ավարտված | նախապատրաստվել միջազգային մրցաշարի | մարզական նախապատրաստվածություն |
| 3 | Եվրոպայի Ձյուդոյի միության 2022թ տարեկան անդամավճար | Վիենա,Ավստրիա | Ավարտված | Մասնակցության վճար բոլոր մրաշարերին | Մասնակցության վճար բոլոր մրաշարերին |
| 4 | ՈՒՄՀ մեծեր | Գորի,Վրաստան | Ավարտված | նախապատրաստվել միջազգային մրցաշարի | մարզական նախապատրաստվածություն |
| 5 | ՈՒՄՀ երիտասարդներ | Գորի,Վրաստան | Ավարտված | նախապատրաստվել միջազգային մրցաշարի | մարզական նախապատրաստվածություն |
| 6 | Եվրոպայի գավաթ և ՈՒՄՀ երիտասարդներ | Աթենք ,Հունաստան | Ավարտված | մրցանակային տեղեր գրավել | դրական |
| 7 | Միջազգային մրցաշար և ՈՒՄՀ մեծեր | Տատա, Հունգարիա | Ավարտված | մրցանակային տեղեր գրավել | մարզական նախապատրաստվածություն |
| 8 | ՈՒՄՀ պատանիներ | Երևան, ՀՀ | Ավարտված | նախապատրաստվել միջազգային մրցաշարի | մարզական նախապատրաստվածություն |
| 9 | ՈՒՄՀ պատանիներ | Գյումրի ,ՀՀ | Ավարտված | նախապատրաստվել միջազգային մրցաշարի | մարզական նախապատրաստվածություն |
| 10 | Եվրոպայի գավաթ մեծեր | Սարաևո, Բոսնիա Հերցեգովինա | Ավարտված | մրցանակային տեղեր գրավել | դրական |
| 11 | Եվրոպայի գավաթ և ՈՒՄՀ պատանիներ | Բուխարեստ, Ռումինիա | Ավարտված | մրցանակային տեղեր գրավել | դրական |
| 12 | Եվրոպայի առաջնություն մեծեր | Սոֆիա, Բուլղարիա | Ավարտված | մրցանակային տեղեր գրավել | դրական |
| 13 | ՈՒՄՀ մեծեր և երիտասարդներ | Գորի,Վրաստան | Ավարտված | նախապատրաստվել միջազգային մրցաշարի | մարզական նախապատրաստվածություն |
| 14 | Եվրոպայի առաջնություն պատանիներ | Պորեք,Խորվաթիա | Ավարտված | մրցանակային տեղեր գրավել | 1 արծաթ + 1բրոնզ |
| 15 | ՈՒՄՀ պատանիներ | Գորի,Վրաստան | Ավարտված | նախապատրաստվել միջազգային մրցաշարի | մարզական նախապատրաստվածություն |
| 16 | ՈՒՄՀ մեծեր | Վլադիկավկազ ՌԴ | Ավարտված | նախապատրաստվել միջազգային մրցաշարի | մարզական նախապատրաստվածություն |
| 17 | ՀՀառաջնություն երիտասարդնե | Երևան, ՀՀ | Ավարտված | ՀՀ հավաքական թիմի կազմավորում | հավաքական թիմի կազմավորում |
| 18 | ՀՀ առաջնություն պատանիներ | Երևան, ՀՀ | Ավարտված | ՀՀ հավաքական թիմի կազմավորում | հավաքական թիմի կազմավորում |
| 19 | ՈՒՄՀ մեծեր | Երևան, ՀՀ | Ավարտված | նախապատրաստվել միջազգային մրցաշարի | մարզական նախապատրաստվածություն |
| 20 | ՈՒՄՀ երիտասարդներ | Երևան, ՀՀ | Ավարտված | նախապատրաստվել միջազգային մրցաշարի | մարզական նախապատրաստվածություն |
| 21 | ՈՒՄՀ երիտասարդներ նպատանիներ | Գորի,Վրաստան | Ավարտված | նախապատրաստվել միջազգային մրցաշարի | մարզական նախապատրաստվածություն |
| 22 | Գնումների համակարգողի ծառայություն | Երևան, ՀՀ | Ավարտված | Գնումների կազմակերպում | Գնումների կազմակերպում |
| 23 | Գնումների համակարգողի ծառայություն | Երևան, ՀՀ | Ավարտված | Գնումների կազմակերպում | Գնումների կազմակերպում |
| 24 | Եվրոպայի առաջնություն մինչև 23 տարեկաններ | Սարաևո, Բոսնիա Հերցեգովինա | Ավարտված | մրցանակային տեղեր գրավել | դրական |
| 25 | ՈՒՄՀ մեծեր և երիտասարդներ | Գորի,Վրաստան | Ավարտված | նախապատրաստվել միջազգային մրցաշարի | մարզական նախապատրաստվածություն |
| 26 | Գնումների համակարգողի ծառայություն | Երևան, ՀՀ | Ավարտված | Գնումների կազմակերպում | Գնումների կազմակերպում |
| 27 | Եվրոպայի առաջնություն երիտասարդներ | Պրահա, Չեխիա | Ավարտված | մրցանակային տեղեր գրավել | դրական |
| 28 | ՈՒՄՀ երիտասարդներ | Գյումրի ,ՀՀ | Ավարտված | նախապատրաստվել միջազգային մրցաշարի | մարզական նախապատրաստվածություն |
| 29 | ՈՒՄՀ պատանիներ | Գյումրի ,ՀՀ | Ավարտված | նախապատրաստվել միջազգային մրցաշարի | մարզական նախապատրաստվածություն |
| 30 | Աշխարհի առաջնություն պատանիներ | Սարաևո, Բոսնիա Հերցեգովինա | Ավարտված | մրցանակային տեղեր գրավել | 1 ոսկի |
| 31 | ՈՒՄՀ պատանիներ | Գորի,Վրաստան | Ավարտված | նախապատրաստվել միջազգային մրցաշարի | մարզական նախապատրաստվածություն |
| 32 | Միջազգային մրցաշար պատանիներ | Նալչիկ, ՌԴ | Ավարտված | մրցանակային տեղեր գրավել | դրական |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 33 | ՌԻՄՀ երիտասարդներ | Տուափսե ,ՌԴ | Ավարտված | նախապատրաստվել միջազգային մրցաշարի | մարզական նախապատրաստվածությ ուն |
| 34 | ՀՀառաջնություն մեծեր | Երևան ,ՀՀ | Ավարտված | ՀՀ հավաքական թիմի կազմավորում | հավաքական թիմի կազմավորում |
| 35 | ՀՀ հավաքական թիմերի մարզիկների ֆունիոնալ վիճակի արդյունավետության բարցրացման նպատակով վիտամինիզաիայի և չարգելված սպորտային հավելյալ սնունդով ապահովումր | Երևան ,ՀՀ | Ավարտված | մարզիկնեչի մարզական միջացուռուներ | Սննդի հավելում |

**8. Տարեկան մուտքեր՝**

| | |
|---|---|
| 8.1 Դրամական միջոցները | 101,709,279 |
| 8.2 Գույքը | |
| Ընդամենը | 101,709,279 |

**9. Հանրային միջոցներ և ստացման աղբյուրներ**

| Հ/Հ | 9.1 Դրամական միջոցները | 9.3 Ստացման աղբյուրները |
|---|---|---|
| 1 | 86,900,000 | ՀՀ կրթության,գիտության,մշակույթի բսպորտի նախարարություն |
| Հ/Հ | 9.2 Գույքը | |
| 1 | | |
| Ընդամենը | 86,900,000 | |

**10. Օգտագործված դրամական միջոցները և/կամ շարժական/անշարժ գույքը՝**

| | | |
|---|---|---|
| 10.1 Դրամական միջոցները | | 101,709,279 |
| 10.2 Գույքը | | |
| Հ/Հ | 10.2.1 Տեսակը | 10.2.2 Արժեքը |
| 1 | | |
| Ընդամենը | | 101,709,279 |

**11. Հանրային դրամական միջոցների և/կամ տրամադրված գույքի օգտագործումը, ծախսերը՝**

| | | |
|---|---|---|
| 11.1 Դրամական միջոցները | | 86,900,000 |
| 11.2 Գույքը | | |
| Հ/Հ | 11.2.1 Տեսակը | 11.2.2 Արժեքը |
| 1 | | |
| Ընդամենը | | 86,900,000 |

**12. Ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելու՝**

| Հ/Հ | 12.1 Տեսակը | 12.2 Ստացված շահույթը | 12.3 Շահույթի օգտագործումը |
|---|---|---|---|
| 1 | | | |
| Ընդամենը | | 0 | |
| Նշումներ | | | |
| | | | |

Կից ներկայացվում է՝

Աուդիտորի եզրակացություն՝ ________4________ էջից

Էջերի քանակը

Գործադիր մարմնի ղեկավար ______________________
ստորագրություն, անունը, ազգանունն

Գլխավոր հաշվապահ ______________________
ստորագրություն, անունը, ազգանունն

**ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՁԵՎՈՎ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ ՆՍՊՎ_ 60 -2022_ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ**

ք. Երևան «25» հունվարի 2022 թ.

Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը (այսուհետ՝ պետական մարմին), ի դեմս գլխավոր քարտուղարի պարտականությունները կատարող Վահրամ Գասպարյանի, որը գործում է պետական մարմնի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և «Հայաստանի ձյուդոյի ֆեդերացիա» հասարակական կազմակերպությունը (այսուհետ՝ կազմակերպություն) ի դեմս նախագահ Վարդան Ոսկանյանի, որը գործում է «Հայաստանի ձյուդոյի ֆեդերացի » հասարակական կազմակերպության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից (այսուհետ՝ միասին՝ կողմեր), հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի դեկտեմբերի 23-ի N 2121-Ն որոշումը (այսուհետ՝ որոշում) «1041. Մեծ նվաճումների սպորտ» ծրագրի «11030. ՀՀ հավաքական թիմերի մարզիկների ֆունկցիոնալ վիճակի արդյունավետվության բարձրացման նպատակով վիտամինիզացիայի և չարգելված սպորտային հավելյալ սննդով ապահովում» միջոցառման (այսուհետ՝ ծրագիր) իրականացման նպատակով կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ պայմանագիր)՝ հետևյալի մասին.

## 1. Պայմանագրի առարկան

1.1. Սույն պայմանագրով պետական մարմինը պարտավորվում է ծրագրի իրականացման նպատակով կազմակերպությանը հատկացնել որոշմամբ նախատեսված՝ մինչև 900,000 (ինը հարյուր) ՀՀ դրամ գումար՝ ծրագրով և (կամ) սույն պայմանագրով սահմանված չափաքանակներով՝ հիմք ընդունելով ծրագրի ֆինանսավորման համար կազմակերպության ներկայացրած նախահաշիվը, իսկ կազմակերպությունը պարտավորվում է ծրագիրն իրականացնել որոշմամբ և սույն պայմանագրով սահմանված կարգով:

1.2. Ծրագրով նախատեսված՝ կազմակերպության կողմից իրականացվելիք միջոցառումները (այսուհետ՝ միջոցառում) ներկայացված են սույն պայմանագրի N1 հավելվածում:

## 2. Կողմերի իրավունքները և պարտավորությունները

2.1. Պետական մարմինն իրավունք ունի՝

2.1.1. ցանկացած ժամանակ ստուգելու կազմակերպության կողմից իրականացվող ծրագրի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

2.1.2. որոշմամբ սահմանված պահանջներին չհամապատասխանելու դեպքում չընդունելու իրականացված ծրագիրը՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ, և կազմակերպությունից պահանջելու վճարել սույն պայմանագրի 5.1 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3. առանց իրականացված ծրագրի արդյունքների դիմաց գումար տրամադրելու՝ միակողմանի լուծելու սույն պայմանագիրը և պահանջելու հատուցել պատճառված վնասները, եթե՝

ա. Առանց հիմնավոր պատճառի կազմակերպությունը ժամանակին չի սկսում ծրագրի իրականացումը, կամ ծրագրի իրականացման ժամանակ ակնհայտ է դառնում, որ այն պատշաճ չի իրականացվելու,

բ. կազմակերպությունը երկու և ավելի անգամ խախտել է ծրագրի իրականացման ժամկետները (իրականացման ժամկետներ նախատեսված լինելու դեպքում),

գ. իրականացված միջոցառումները չեն համապատասխանում ծրագրով սահմանված պահանջներին.

2.1.4. կատարողի կողմից սույն պայմանագրի 2.4.4. կետի պահանջները չկատարելու դեպքում դադարեցնել ֆինանսավորումը՝ մինչև թերությունների վերացումը.

2.1.5. սույն պայմանագիրն օրենքով կամ սույն պայմանագրով նախատեսված հիմքերով լուծելու դեպքում պահանջելու իրեն հանձնել անավարտ ծրագրի արդյունքները:

2.2. Կազմակերպությունն իրավունք ունի՝

2.2.1. իրականացված ծրագրի արդյունքը պետական մարմնի կողմից ընդունվելու դեպքում պահանջելու վճարել իրեն հասանելիք գումարը.

2.2.2. պետական մարմնի կողմից գումարները չվճարվելու դեպքում միակողմանի լուծելու սույն պայմանագիրը և պահանջելու հատուցել իրեն պատճառված վնասները:

2.3. Պետական մարմինը պարտավոր է՝

2.3.1. ծրագրով նախատեսված դեպքերում աջակցել կազմակերպությանը.

2.3.2. կատարել ծրագրի իրականացման մոնիթորինգ՝ անհրաժեշտության դեպքում համագործակցելով այլ պետական կառավարման մարմինների հետ.

2.3.3. իրականացնել ծրագրով նախատեսված այլ աշխատանքներ.

2.3.4. իրականացված ծրագրի մասին ներկայացված կատարողական հաշվետվությունների վերաբերյալ համապատասխան որոշում ընդունել դրանք ստանալու օրվանից մինչև 20 աշխատանքային օրվա ընթացքում: Եթե ներկայացված հաշվետվությունների համաձայն իրականացված ծրագիրը համապատասխանում է սույն պայմանագրի պահանջներին, ապա այն ընդունվում է:

2.4. Կազմակերպությունը պարտավոր է՝

2.4.1. իրականացնել ծրագրի շրջանակներում պետական մարմնի կողմից տրամադրված գումարների հաշվապահական հաշվառման վարում՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով.

2.4.2. պայմանագրով նախատեսված ֆինանսական միջոցներն օգտագործել ծրագրով և (կամ) սույն պայմանագրով սահմանված նպատակներով ու չափաքանակներով՝ համաձայն սույն պայմանագրի հիմք հանդիսացող N 1 հավելվածի.

2.4.3. կատարել պետական մարմնի կողմից բացահայտված թերությունների վերացման նպատակով տրված ցուցումները.

2.4.4. սույն պայմանագրով սահմանված կարգով ծրագրի ավարտից հետո տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում պետական մարմին ներկայացնել միջոցառումների իրականացման մասին բովանդակային և ֆինանսական հաշվետվություններ, իսկ ըստ անհրաժեշտության՝ նաև ամփոփ հաշվետվություն.

2.4.5. սույն պայմանագրի գործողության ընթացքում ապահովել ծրագրի իրականացմանը վերաբերող փաստաթղթերին ծանոթանալու պետական մարմնի հնարավորությունը՝ վերջինիս կողմից գրավոր պահանջ ստանալու օրվանից 5 աշխատանքային օրվա ընթացքում.

2.4.6. պետական մարմնի կողմից հաշվետվությունները չընդունվելու դեպքում կազմակերպությունը պարտավորվում է անվճար՝ պետական մարմնի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել արձանագրված անհամապատասխանությունները.

2.4.7. ծրագրի իրականացման համար անհրաժեշտ ապրանքները, աշխատանքները և ծառայությունները ձեռք բերել «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով.

2.4.8. ավարտված ծրագրի փաստացի կատարված ծախսերի հաշվետվությունը ներկայացնել պետական մարմին, նկատի ունենալով, որ փաստացի ծախսերը հիմնավորող հաշվապահական և այլ փաստաթղթերը գտնվում են Կազմակերպությունում և վերջինս պատասխանատվություն է կրում դրանց իսկության համար.

2.4.9. ծրագրի ֆինանսավորում ստանալու հայտը (կցելով նախահաշիվը և կանոնադրությունը՝ առկայության պարագայում) ներկայացնել պետական մարմին՝ մինչև միջոցառման անցկացմանը նախորդող ամսվա 15-ը, իսկ միջոցառումների ժամանակացույցի փոփոխության դեպքում՝ այն նախապես համաձայնեցնել պետական մարմնի հետ և այդ միջոցառման հայտը պետական մարմին ներկայացնել մինչև միջոցառման անցկացմանը նախորդող ամսվա 25-ը.

2.4.10. չծախսված գումարի վերջնական, տարեվերջյան մնացորդը (տնտեսումները, խնայողությունները) վերադարձնել Հայաստանի Հանրապետության պետական բյուջե ոչ ուշ, քան մինչև 2022 թվականի դեկտեմբերի 25-ը:

### 3. Մոնիթորինգը

3.1. Պետական մարմինը ծրագրի իրականացման նախնական, ընթացիկ և վերջնական արդյունքների համապատասխանության գնահատման նպատակով իրականացնում է մոնիթորինգ:

3.2. Մոնիթորինգն իրականացվում է պետական մարմնի և (կամ) նրա կողմից լիազորված անձի կողմից:

3.3. Մոնիթորինգի իրականացման ընթացքում բացահայտված թերացումների ու բացթողումների շտկման նպատակով կազմակերպությանը տրվում են ցուցումներ, և կատարվում են առաջարկություններ:

3.4. Պետական մարմինը ցանկացած ժամանակ կարող է ծրագրի շրջանակներում իրականացնել մոնիթորինգ՝ ուսումնասիրելով ծրագրին առնչվող ցանկացած փաստաթղթեր և նյութեր:

3.5. Մոնիթորինգի իրականացման ընթացքում կազմակերպությունից կարող են պահանջվել գրավոր ու բանավոր պարզաբանումներ և բացատրություններ:

### 4. Վճարման կարգը և ժամկետները

4.1 Սույն պայմանագրի 1.1 կետով նախատեսված գումարի 80 %-ը պետական մարմինը փոխանցում է կազմակերպությանը՝ համաձայն սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող N2 հավելվածի՝ վճարման ժամանակացույցի, իսկ մնացած մասը՝ վճարվում է պետական մարմնի կողմից միջոցառումների իրականացման մասին հաշվետվությունը ընդունելու օրվան հաջորդող 20 աշխատանքային օրվա ընթացքում:

4.2 Պետական մարմինը վճարումն իրականացնում է անկանխիկ՝ դրամական միջոցները կազմակերպության հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով:

### 5. Կողմերի պատասխանատվությունը

5.1. Սույն պայմանագրով նախատեսված հաշվետվությունների ներկայացման համար սահմանված ժամկետները չպահպանելու դեպքում Կազմակերպությունը Պետական մարմնին վճարում է տույժ՝ չներկայացված հաշվետվության համար պետական մարմնի կողմից հաստատված նախահաշվի 0.05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով՝ ուշացված յուրաքանչյուր օրացույցային օրվա համար, իսկ պայմանագրով և ծրագրով նախատեսված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքում կազմակերպությունը, եթե Պետական մարմնին չի ներկայացրել դրա վերաբերյալ հիմնավոր բացատրություն, վճարում է տուգանք չկատարած աշխատանքի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

5.2. Տույժի և տուգանքի վճարումը կազմակերպությանը չի ազատում իր պարտավորությունները կատարելու և խախտումները վերացնելու պարտականությունից: Պետական մարմինը սույն կետով նախատեսված գումարները հաշվարկում և հաշվանցում է կազմակերպությանը վճարվելիք գումարներից կամ պահանջում է հետ վճարել :

## 6. Պայմանագրի գործողության ժամկետը

6.1. Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում մինչև պարտավորությունների ամբողջ ծավալով կատարումը:

## 7. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

7.1. Պայմանագրով նախատեսված պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներն են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարումը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 ամսվանից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծելու պայմանագիրը՝ դրա մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 8. Եզրափակիչ դրույթներ

8.1. Պայմանագրում կատարվող փոփոխությունները կամ լրացումներն իրավաբանական ուժ ունեն, եթե կազմված են գրավոր և ստորագրված են կողմերի կողմից:

8.2. Պայմանագիրը կնքվում է պայմանագրի կողմերի թվին համապատասխան թվով օրինակով, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

8.3. Պայմանագրով նախատեսված պարտավորությունների չկատարման հետ կապված, ինչպես նաև սույն պայմանագրով չնախատեսված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

## 9. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

| | |
|---|---|
| ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ | ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ |
| ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն | «Հայաստանի ձյուդոյի ֆեդերացիա» հասարակական կազմակերպություն |
| Հասցե՝ ք. Երևան, Կառավարական 2-րդ շենք | ք. Երևան, Աբովյան 16, |
| ՀՀ ՖՆ գործառնական վարչություն | Բանկ՝ «Հայէկոնոմբանկ» ԲԲԸ Սպանդարյան մասնաճյուղ |
| Հ/Հ 900011037430 | Հ/Հ՝ 163048110080 |
| ՀՎՀՀ՝ 02698732 | ՀՎՀՀ՝ 02549194 |
| | Էլ. փոստ՝ armjudo@yandex.ru |
| Գլխավոր քարտուղարի պարտականությունները կատարող՝ | Նախագահ՝ |
| ________________ Վ.Գասպարյան | ________________ Վ. Ռսկանյան |
| Կ.Տ. | Կ.Տ. |

**Հավելված N1**
**2022 թ. հունվար25 -ի**
**կնքված N ՍՊՎ 60 -2022 պայմանագրի**

# Մ Ի Ջ Ո Ց Ա Ռ ՈՒ Մ Ն Ե Ր

| | Իրականացվելիք միջոցառման անվանումը | Համառոտ բովանդակությունը | Կատարման ենթակա գործառույթների նկարագիրը | Ակնկալվող արդյունքները և դրանց գնահատման չափանիշները | Վերջնաժամկետը | Պահանջվող գումարը(դրամ) |
|---|---|---|---|---|---|---|
| 1. | **«Հայաստանի ձյուդոյի ֆեդերացիա»** ՀՀ հավաքական թիմերի մարզիկների ֆունկցիոնալ վիճակի արդյունավետության բարձրացման նպատակով վիտամինիզացիայի և չարգելված սպորտային հավելյալ սննդով ապահովում | 2022թվականը օլիմպիական խաղերին հավաքական թիմերը նախապատրաստվում են մասնակցելու օլիմպիական վարկանիշային մրցաշարերի, աշխարհի և Եվրոպայի առաջնությունների և ի վերջո օլիմպիական խաղերի, որոնց լավագույն ձևով նախապատրաստվելու և կայուն ֆունկցիոնալ վիճակ ձեռք բերելու նպատակով անց է կացվում ուսումնամարզական հավաքներ, որն էլ ուղեկցվում է ինտենսիվ մարզումային գործընթացով և հանգստի փուլով (վերականգնողական) հնարավորություն ընձեռելով ապահովել մարզիկների բարենպաստ և կայունֆունկցիոնալ վիճակ, որն էլ կապահովի կարևորագույն մրցումներում բարձր արդյունքներ նվաճելու պահանջները | **«Հայաստանի ձյուդոյի ֆեդերացիա»** Մարզիկի պատրաստման գործընթացում իր կարևորագույն և առանձնահատուկ տեղն է զբաղեցնում մարզիկների վիտամիններով և չարգելված սպորտային հավելումներով ապահովման գործընթացը, ինչի համար նպատակահարմար ենք համարում ներդնել «ՀՀ հավաքական թիմերի մարզիկների ֆունկցիոնալ վիճակի արդյունավետության բարձրացումը վիտամինիզացիայի և չարգելված սպորտային հավելյալ սննդով ապահովման միջոցով» ծրագիրը | Արդյունքները<br>Աջակցություն մարզիկների սպորտային գործունեության, մրցակցային արդյունավետության բարձրացմանը:<br>Գնահատման չափանիշները Ցուցաբերած արդյունքների վերլուծություն նախորդ տարիների արդյունքների և ցուցանիշների համեմատությամբ: | 2022 թ. դեկտեմբերի 30-ը | 900,000 |
| Ընդամենը | | | | | | 900,000 |

ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ
ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն
Հասցե՝ ք. Երևան, Կառավարական 2-րդ շենք
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011037430
ՀՎՀՀ՝ 02698732
Ղեկավար քարտուղարի պարտականությունները կատարող
Վ. Գասպարյան
Կ.Տ.

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ
«Հայաստանի ձյուդոյի ֆեդերացիա» հասարակական կազմակերպություն
ք. Երևան, Աբովյան 16,
Բանկ՝ «Հայէկոնոմբանկ» ԲԲԸ Կենտրոնական մասնաճյուղ
Հ/Հ՝ 163048110080
ՀՎՀՀ՝ 02549194
Էլ. փոստ՝ armjudo@yandex.ru
Նախագահ
Վ. Ոսկանյան
Կ. Տ.

Հավելված N2
2022 թ. հունվար 25-ին
կնքված N ՍՊԿ60-2022 պայմանագրի

«Հայաստանի ձյուդոյի ֆեդերացիա» հասարակական կազմակերպության 2022թ. ՀՀ պետական բյուջեից ֆինանսավորման չափի վճարման ժամանակացույց(աճողական)

| Ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի, ծառայության անվանումը | Ընդամենը տարեկան (հազար դրամ) | Նախատեսվում է ֆինանսավորել ՀՀ 2022 թվականի պետական բյուջեից (հազար դրամ), ընդ որում՝ | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | 1 եռամսյակ | | | 6 ամիս | | | 9 ամիս | | | տարի | | |
| | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 | 12 | 13 | 14 |
| Ծրագիր | 900.0 | 720.0 | 900.0 | 900.0 | 900.0 | 900.0 | 900.0 | 900.0 | 900.0 | 900.0 | 900.0 | 900.0 | 900.0 |
| Ընդամենը | 900.0 | 720.0 | 900.0 | 900.0 | 900.0 | 900.0 | 900.0 | 900.0 | 900.0 | 900.0 | 900.0 | 900.0 | 900.0 |

ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն
Հասցե՝ ք. Երևան, Կառավարական 2-րդ շենք
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011037430
ՀՎՀՀ՝ 02698732
Գլխավոր քարտուղարի պարտականությունները կատարող՝

Վ. Ավագյան

Կ.Տ.

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

«Հայաստանի ձյուդոյի ֆեդերացիա» հասարակական կազմակերպություն
ք. Երևան, Աբովյան 16,
Բանկ՝ «Հայէկոնոմբանկ» ԲԲԸ
Ալպանդարյան մասնաճյուղ
Հ/Հ՝ 163048110080
ՀՎՀՀ՝ 02549194
Էլ. փոստ՝ armjudo@yandex.ru
Նախագահ՝

Վ. Ոսկանյան

Կ. Տ.

## ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ № 01

**2022 թվականի հունվարի 24-ին «Պետության կողմից դրամաշնորհի ձևով տրամադրվող ֆինանսական աջակցության գումարների օգտագործման մասին» № ՍՊՖ 16-2022 պայմանագրում փոփոխություններ կատարելու վերաբերյալ**

ք. Երևան «06» հունիսի 2022 թ.

Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը (այսուհետ՝ Պետական մարմին), ի դեմս քարտուղար՝ Գագիկ Սաֆարյանի, որը գործում է պետական մարմնի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և «Հայաստանի ձյուդոյի ֆեդերացիա» հասարակական կազմակերպությունը (այսուհետ՝ ֆեդերացիա), ի դեմս նախագահ Վարդան Ոսկանյանի, որը գործում է ֆեդերացիայի կանոնադրության հիման վրա, մյուս կողմից (այսուհետ՝ միասին՝ Կողմեր), կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

### 1. ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2022 թվականի մայիսի 26-ի N 759 -Ն որոշումը և 2022 թվականի հունվարի 24-ին կնքված «Պետության կողմից դրամաշնորհի ձևով տրամադրվող ֆինանսական աջակցության գումարների օգտագործման մասին» №ՍՊՖ 16-2022 պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 8.1-րդ կետը՝ Պայմանագրի Կողմերը համաձայնվեցին Պայմանագրում կատարել հետևյալ փոփոխությունները՝

1.1.1 Պայմանագրի 1.1-ին կետով նախատեսված «68,000,000 (վաթսունութ միլիոն)» թիվը և բառերը փոխարինել «86,000,000 (ութսունվեց միլիոն)» թվով և բառերով:

1.1.2 Պայմանագրի Հավելված N1-ը և Հավելված N2-ը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն համապատասխանաբար Հավելված N1.1-ի և Հավելված N2.1-ի:

### 2. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

2.1 Սույն համաձայնագիրը ուժի մեջ է մտնում Կողմերի կողմից ստորագրվելու պահից:
2.2 Սույն համաձայնագիրը Պայմանագրի անբաժանելի մասն է:
2.3 Սույն համաձայնագիրը կազմված է հայերենով երկու օրինակից, կնքված է, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

### 3. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ
Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն
Հասցե՝ ք. Երևան, Կառավարական 2-րդ շենք
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ՝ 900011032027
ՀՎՀՀ՝ 02698732
Գլխավոր քարտուղարի՝

_______________ Գ. Սաֆարյան
Կ. Տ.

ՖԵԴԵՐԱՑԻԱ
«Հայաստանի ձյուդոյի ֆեդերացիա» հասարակական կազմակերպություն
ք. Երևան, Աբովյան 16,
Բանկ՝ «Հայէկոնոմբանկ» ԲԲԸ
Սպանդարյան մասնաճյուղ
Հ/Հ՝ 163048110080
ՀՎՀՀ՝ 02549194
Էլ. փոստ՝ armjudo@yandex.ru
Նախագահ՝

_______________ Վ. Ոսկանյան
Կ. Տ.

Հավելված №2.1
2022թ. 06 հունիսի № 01 համաձայնագրի
« Հավելված №2
2022 թ. հունվարի 24-ի № ՍՊՖ 16-2022պայմանագրի»

Վճարման ժամանակացույց

«Հայաստանի ձյուդոյի ֆեդերացիա» հասարակական կազմակերպության 2022թ. Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից ֆինանսավորման չափի

| Ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի, ծառայության անվանումը | Ընդամենը տարեկան (հազար դրամ) | Նախատեսվում է ֆինանսավորել ՀՀ 2022 թվականի պետական բյուջեից (հազար դրամ), ընդ որում` | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | 1 եռամսյակ | | | 6 ամիս | | | 9 ամիս | | | տարի | | |
| | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 | 12 | 13 | 14 |
| **Ծրագիր** | 86000,0 | 20969,6 | 20969,6 | 20969,6 | 51752,0 | 51752,0 | 57663,6 | 83348.0 | 83348.0 | 83348.0 | 86000,0 | 86000,0 | 86000,0 |
| **Ընդամենը** | 86000,0 | 20969,6 | 20969,6 | 20969,6 | 51752,0 | 51752,0 | 57663,6 | 83348.0 | 83348.0 | 83348.0 | 86000,0 | 86000,0 | 86000,0 |

ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ

Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն
Հասցե՝ ք. Երևան, Կառավարական 2-րդ շենք
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011032027
ՀՎՀՀ՝ 02698732
Գլխավոր քարտուղար՝
Գ. Սաֆարյան
Կ. Տ.

ՖԵԴԵՐԱՑԻԱ

«Հայաստանի ձյուդոյի ֆեդերացիա» հասարակական կազմակերպություն
ք. Երևան, Աբովյան 16,
Բանկ՝ «Հայէկոնոմբանկ» ԲԲԸ
Սպանդարյան մասնաճյուղ
Հ/Հ՝ 163048110080
ՀՎՀՀ՝ 02549194
Էլ. փոստ՝ armjudo@yandex.ru
Նախագահ՝
Վ. Ոսկանյան
Կ. Տ.

Հավելված № 1.1
2022թ. 06 հունիսի № 01 համաձայնագրի
« Հավելված № 1

2022 թ. հունվարի 24-ի № ՍՊՖ 16-2022պայմանագրի

# Մ Ի Ջ Ո Ց Ա Ռ Ո Ւ Մ Ն Ե Ր

| | Իրականացվելիք միջոցառման անվանումը | Համառոտ բովանդակությունը | Կատարման ենթակա գործառույթների նկարագիրը | Ակնկալվող արդյունքները և դրանց գնահատման չափանիշները | Վերջնաժամկետը | Պահանջվող գումարը(դրամ) |
|---|---|---|---|---|---|---|
| 1. | **Հայաստանի ձյուդոյի ֆեդերացիա**<br>ՀՀ առաջնություններ<br>(մեծահասակների – 1 երիտասարդներ – 1 պատանիների – 1)<br>Եվրոպայի առաջնություն<br>(մեծահասակների – 1 պատանիների – 1)<br>Մինչև 23 տարեկանների Եվրոպայի առաջնություն (1)<br>Աշխարհի առաջնություն<br>(մեծահասակների 1- երիտասարդներ-1 պատանիներ-1)<br>Միջազգային մրցաշար (մեծահասակների- 3,<br>Ուսումնամարզական հավաք<br>(մեծահասակների – 8 երիտասարդներ – 4 պատանիների – 3)<br>Մեծահասակների միջազգային ուսումնամարզական հավաք -7<br>Մեծ Սաղավար ՈՒՄՀ -3<br>Մեծահասակների Եվրոպայի գավաթ-3<br>երիտասարդների Եվրոպայի գավաթ 4 և ՈՒՄՀ 4 ,<br>Եիտասարդների միջազգային ՈՒՄՀ -2<br>COVID-19 թեստի վճարի հատուցում<br>Միջազգային և Եվրոպական ֆեդերացիաններին անդամակցությունան տարեկան վճար: | ՀՀ առաջնություններին և միջազգային միջոցառումներին մասնակցության ապահովման համար մարզիկների նախապատրաստում և առաջնությունների անցկացում | **«Հայաստանի ձյուդոյի ֆեդերացիա»** հասարակական կազմակերպության կողմից մարզիկների պատրաստում և ձյուդո մարզաձևի ՀՀ առաջնությունների և միջազգային մրցաշարերի անցկացում, ուսումնամարզական հավաքների կազմակերպում և միջազգային միջոցառումներին մասնակցություն | **Արդյունքները**<br>ա) տարբեր մարզաձևերից Հայաստանի Հանրապետության առաջնությունների մասնակիցների թվի աճ.<br>բ) Հայաստանի Հանրապետության առաջնությանը մասնակցող մարզերի, քաղաքների, մարզական կազմակերպությունների թիմերի քանակի ավելացում:<br>**Գնահատման չափանիշները**<br>Վերոնշյալ ցուցանիշների վերլուծություն նախորդ տարիների ցուցանիշների համեմատությամբ: | 2022 թ. դեկտեմբերի 30-ը | 86.000.000 |
| Ընդամենը | | | | | | |

ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ
ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն
Հասցե՝ ք. Երևան, Կառավարական 2-րդ շենք
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011032027
ՀՎՀՀ 02698732
Գլխավոր քարտուղար

Գ. Սաֆարյան
Կ. Տ.

ՖԵԴԵՐԱՑԻԱ
«Հայաստանի ձյուդոյի ֆեդերացիա» հասարակական կազմակերպություն
ք. Երևան, Աբովյան 16,
Բանկ՝ «Հայէկոնոմբանկ» ԲԲԸ
Սպանդարյան մասնաճյուղ
Հ/Հ 163048110080
ՀՎՀՀ 02549194
Էլ. փոստ՝ armjudo@yandex.ru
Նախագահ՝

Վ. Ոսկանյան
Կ. Տ.

ՊԻ ԿԱ ԷՖ ԱՈՒԴԻՏ ՍԵՐՎԻՍ ՍՊԸ

PKF

# «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՁՅՈՒԴՈՅԻ ՖԵԴԵՐԱՑԻԱ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

# ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՆԿԱԽ ԱՈՒԴԻՏՈՐԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

## 2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա համար

PKF

ՀՀ, ք. Երևան, Արշակունյաց պողոտա 9/5, գրասենյակ 9, Հեռ.՝ +37411-577-544,
էլ.հասցե՝ auditservicellc@gmail.com, վեբ կայք՝ www.pkfarmenia.com

## Անկախ Աուդիտորական Եզրակացություն

### «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՁՅՈՒԴՈՅԻ ՖԵԴԵՐԱՑԻԱ» ՀԿ-ի ՂԵԿԱՎԱՐՈՒԹՅԱՆԸ

#### ԿԱՐԾԻՔ

Մենք աուդիտի ենք ենթարկել «Հայաստանի ձյուդոյի ֆեդերացիա» հասարակական կազմակերպության (այսուհետ՝ ՀԿ)՝ 2022թ.-ի դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա հատուկ նշանակության ֆինանսական հաշվետվությունը, որը ներառում է «Հասարակական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածով նախատեսված հաշվետվության 7-րդ, 9-րդ և 11-րդ դաշտերում լրացված տվյալները:

Մեր կարծիքով, «Հայաստանի ձյուդոյի ֆեդերացիա» հասարակական կազմակերպության կից ներկայացված հատուկ նշանակության ֆինանսական հաշվետվությունը, որը ներառում է «Հասարակական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածով նախատեսված հաշվետվության 7-րդ, 9-րդ և 11-րդ դաշտերում լրացված տվյալները, բոլոր էական առումներով ճշմարիտ է ներկայացնում 2022 թվականի դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա մուտքերի և ստացման աղբյուրների, ինչպես նաև օգտագործված միջոցների պատկերը՝ «Հասարակական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի պահանջներին համապատասխան:

#### ԿԱՐԾԻՔԻ ՀԻՄՔԵՐ

Մենք աուդիտն իրականացրել ենք աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է մեր եզրակացության՝ «Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար» բաժնում: Անկախ ենք ՀԿ-ից՝ համաձայն Հաշվապահների միջազգային դաշնության պրոֆեսիոնալ հաշվապահների վարքագրքի (ՀՄԴ-ի Վարքագիրք) և Հայաստանի Հանրապետությունում կիրառելի՝ֆինանսական հաշվետվությունների աուդիտի նկատմամբ վարքագծի պահանջների, կատարել ենք վարքագծի նկատմամբ մեր մյուս պարտականությունները՝այդ պահանջների համաձայն: Համոզված ենք, որ ձեռք ենք բերել բավականաչափ ու համապատասխան աուդիտորական ապացույցներ՝մեր կարծիքն արտահայտելու համար:

#### ՂԵԿԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՕՂԱԿՆԵՐՈՒՄ ՆԵՐԳՐԱՎՎԱԾ ԱՆՁԱՆՑ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Հասարակական կազմակերպության ղեկավարությունը պատասխանատու է հասարակական կազմակերպությունների գործունեության հաշվետվության կազմման և ճշմարիտ ներկայացման համար: Այդ նպատակով ղեկավարությունը սահմանում է անհրաժեշտ վերահսկողության համակարգ, որը թույլ է տալիս պատրաստել հասարակական կազմակերպությունների

գործունեության հաշվետվությունը, որը զերծ է խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրումից:

Հասարակական կազմակերպությունների գործունեության հաշվետվությունը պատրաստելիս՝ ղեկավարությունը պատասխանատու է ՀԿ-ի անընդհատ գործելու հնարավորությունը գնահատելու, անընդհատ գործելուն առնչվող հարցերը բացահայտելու (եթե կիրառելի է), ինչպես նաև գործունեության անընդհատության ենթադրության վրա հիմնված հաշվառում վարելու համար, քանի դեռ ղեկավարությունը չի նախատեսում լուծարել ՀԿ-ն կամ դադարեցնել դրա գործունեությունը, կամ չունի իրատեսական այլընտրանք, բացի նշվածները:

Կառավարման օղակներում ներգրավված անձիք պատասխանատու են հասարակական կազմակերպությունների գործունեության հաշվետվության կազման գործընթացը վերահսկելու համար:

## ԱՈՒԴԻՏՈՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՈՒԴԻՏԻ ՀԱՄԱՐ

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում՝խարդախությունների կամ սխալների հետևանքով հասարակական կազմակերպությունների գործունեության հաշվետվության էական խեղաթյուրումներից զերծ լինելու վերաբերյալ, ինչպես նաև ներկայացնել աուդիտորի եզրակացություն, որը կներառի մեր կարծիքը: Ողջամիտ հավաստիացումը բարձր աստիճանի հավաստիացում է, սակայն այն երաշխիք չի հանդիսանում, որ ԱՄՍ-ների համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումներ, երբ այդպիսիք կան: Խեղաթյուրումները կարող են առաջանալ խարդախության կամ սխալի հետևանքով և համարվում են էական, եթե ակնկալվում է, որ դրանք առանձին-առանձին կամ միասին վերցված կարող են ազդել այս ֆինանսական հաշվետվության օգտագործողների՝ դրա հիման վրա կայացրած տնտեսական որոշումների վրա:

ԱՄՍ-ների համապատասխան իրականացվող աուդիտի շրջանակներում մենք կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում ենք մասնագիտական կասկածամտություն ամբողջ աուդիտի ընթացքում: Բացի այդ.

- Բացահայտում և գնահատում ենք ֆինանսական հաշվետվությունում խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք այդ ռիսկերին ուղղված աուդիտորական ընթացակարգեր, և ձեռք ենք բերում բավականաչափ ու համապատասխան աուդիտորական ապացույցներ՝մեր կարծիքն արտահայտելու համար:
  Խարդախության արդյունք հանդիսացող էական խեղաթյուրման չբացահայտման ռիսկն ավելի մեծ է, քան սխալի հետևանքով առաջացած խեղաթյուրման չբացահայտման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, փաստաթղթերի կեղծում, միտումնավոր բացթողումներ, կեղծ հայտարարությունների տրամադրում կամ ներքին վերահսկողության համակարգի չարաշահում:

- Պատկերացում ենք կազմում աուդիտին առնչվող ներքին վերահսկողության վերաբերյալ, որպեսզի մշակենք համապատասխան աուդիտորական ընթացակարգեր, բայց ոչ՝ ՀԿ-ի ներքին վերահսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար:

- Գնահատում ենք կիրառվող հաշվապահական հաշվառման քաղաքականության պատշաճությունը, ինչպես նաև ղեկավարության կատարած հաշվապահական գնահատումների և համապատասխան բացահայտումների ողջամտությունը:

- Եզրահանգումներ ենք կատարում ղեկավարության կողմից անընդհատության սկզբունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ և ձեռք բերված աուդիտորական ապացույցների հիման վրա հետևություն ենք անում, թե արդյոք առկա՞ է իրադարձությունների կամ հանգամանքների հետ կապված էական անորոշություն, որը կարող է էական կասկած առաջացնել ՀԿ-ի անընդհատ գործելու հնարավորության վերաբերյալ:

- Գնահատում ենք ընդհանուր առմամբ հասարակական կազմակերպությունների գործունեության հաշվետվության ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, և թե արդյո՞ք ֆինանսական հաշվետվությունը ներկայացնում է դրա հիմքում ընկած գործարքներն ու իրադարձությունները այն ձևով, որն ապահովում է ճշմարիտ ներկայացումը:

Այլ հարցերի հետ մեկտեղ, մենք հաղորդակցում ենք կառավարման օղակներում ներգրավված անձանց հետ աուդիտի պլանավորված շրջանակների և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված էական թերացումների վերաբերյալ, որոնք ներառում են աուդիտի ընթացքում մեր կողմից բացահայտված ներքին վերահսկողության կարևոր թերությունները:

**Ք. Երևան- 19.04.2023թ.**

**ՊԻ ԿԱ ԷՖ ԱՈՒԴԻՏ ՍԵՐՎԻՍ ՍՊԸ**

Գլխավոր տնօրեն՝ Գոռ Դավթյան

Որակավորված աուդիտոր՝ Անահիտ Միրզոյան

«ՊԻ ԿԱ ԷՖ ԱՈՒԴԻՏ ՍԵՐՎԻՍ» "PKF AUDIT SERVICE" 00418022



Signer: ՀՀ ՊԵԿ
Date: 14.07.2023 15:35